ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2004թ. N 63

ք.Ստեփանակերտ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «գ», «զ» ենթակետերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ստեղծել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

ԼՂՀ վարչապետ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

gyux asxatakazm.1

Հավելված 1
ԼՂՀ կառավարության
«____»_____2004թ.
թիվ_____ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության

1.Ընդհանուր դրույթներ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:
2. Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով:
3. Նախարարության լիազորությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Նախարարությունն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Նախարարությունը կազմված է նախարարից և նախարարության աշխատակազմից: Նախարարության համակարգում ընդգրկվում են նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունները և հիմնարկները:
7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

ա) ագրոպարենային ոլորտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության մշակումը և իրականացումը.

բ) գիտատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսական պոտենցիալի առավելագույնս օգտագործման և դրա հիման վրա գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման աշխատանքների կազմակերպման ապահովումը.

գ) ագրոպարենային ոլորտում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ագրարային և ինվեստիցիոն քաղաքականության հիմնադրույթների, հայեցակարգերի, ծրագրերի մշակումն ու իրականացումը, շուկայական

հարաբերությունների ձևավորման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման գործընթացին աջակցությունը:

II. Նախարարության գործառույթները

8. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) ագրոպարենային ոլորտում ձեռնարկատիրական գործունեությանը նպաստող ծրագրերի մշակմանը և իրականացմանն աջակցելը.

բ) իր իրավասության սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ագրարային և պարենային ապահովության քաղաքականության ծրագրերի մշակումը և կատարման նկատմամբ վերահսկողությունը.

գ) սերմնաբուծական և տոհմային տնտեսություններին աջակցելը, գյուղատնտեսական մշակաբույսերի կարանտին հիվանդությունների ու առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, անասնահակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը, կարանտինային սահմանափակումների իրականացումը.

դ) օրենքով սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սելեկցիոն նվաճումների փորձաքննության, գրանցման, արտոնագրման, փորձարկման և իրավական պահպանության իրականացումը.

ե) օրենքով սահմանված կարգով հակամենաշնորհային քաղաքականության իրականացման միջոցառումների իրագործմանը, կոոպերացիայի զարգացմանն աջակցելը, շուկային արագ հարմարվող վերամշակող արդյունաբերության վերագործարկման համար նպաստավոր պայմաններ ստեղծելը, ոլորտում տեխնոլոգիական քաղաքականություն վարելը.

զ) սննդամթերքի անվտանգության, ինչպես նաև դրա հետ առնչվող սարքավորումների տեխնոլոգիական, անասնաբուժական, բուսասանիտարական նորմերի ապահովման նկատմամբ պետական վերահսկողությունը.

է) մարքեթինգային գործունեությանը ցուցաբերվող աջակցության միջոցով հայրենական արտադրողների շահերի պաշտպանությունը և գյուղատնտեսական մթերքի ու հումքի ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավումը.

ը) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը մասնակցելը և հատկացված բյուջետային միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման ապահովումը.

թ) իր իրավասության սահմաններում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պետական պատվերով կատարվող կապիտալ ներդրումների հաշվին շինարարական աշխատանքների իրականացումը.

ժ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ոլորտին վերաբերող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստմանը մասնակցելը և իր իրավասության սահմաններում օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ արտադրական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական համագործակցության միջազգային ծրագրերի մշակումը և իրականացումը.

ժա) գիտատեխնիկական առաջընթացի հիմնական ուղղությունների որոշումը, համակարգի գիտահետազոտական հաստատությունների, ուսումնական հաստատությունների ու խորհրդատվական կազմակերպությունների միջոցով բնագավառի գիտության և կրթության ապահովման կազմակերպումը, գիտահետազոտական աշխատանքների պետական պատվերների ձևավորումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, կադրերի պատրաստման, վերապատրաստման ու մասնագիտական որակավորման բարձրացման կազմակերպումը.

ժբ) բնագավառին առնչվող օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը.

ժգ) օրենքով սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման գործընթացի նախապատրաստման աշխատանքներին մասնակցելը.

ժդ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնետիրական ընկերություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարումը.

ժե) իր իրավասության սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի մոնիտորինգի և գյուղատնտեսական մելիորացիայի զարգացման ոլորտներում տարվող պետական քաղաքականության իրականացումը, ծրագրերի կազմումը և ռազմավարության իրագործումը.

ժզ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրումը և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը…..